# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արմենֆարմ ՍՊԸ-ն ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/06 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 45 | Անիոս Լաբորատորիաներ | Անիոսժել 85 ՆՊՍ | Անիոսժել 85 ՆՊՍ | Անիոս Լաբորատորիաներ | Բաղադրությունը - դենատուրացված էթանոլ 65%, իզոպրոպանոլ 5%-, ինչպես նաև խոնավեցնող, հարթեցնող, փափկեցնող, պաշտպանիչ հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Այն իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքսոտրոպիկ գել (մաշկի վրա վեր է ածվում հեղուկի՝օժտված բարձր թափանցելիությամբ): Տոքսիկ չէ, չունի տեղային գրգռող, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ: Չի պարունակում հոտավետ բաղադրիչներ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Հականեխիչ գելը նախատեսված է վիրաբույժների ձեռքերի վիրաբուժական մշակման համար, բուժական անձնակազմի ձեռքերի հիգիենիկ մշակման համար՝ հաստատված ՀՀ Առողջապահության նախարարության մեթոդական հրահանգներով: Ախտահանիչ նյութը ունի մանրէասպան ազդեցություն գրամբացասական և գրամդրական մանրէների, (այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլյոզի միկոբակտերիաների), վիրուսների (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ), սնկերի (ներառյալ Կանդիդա ցեղի խմորասնկեր) նկատմամբ՝ ինչը հաստատված է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով: Հակամանրէային երկարեցված ազդեցությունը պահպանվում է 3 ժամ: Փաթեթավորումը - 1 լ ծավալի պոլիէթիլենային տարա՝ դիսպենսերով: Վտանգավորության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Տարան դոզավորող պոմպով է՝ 1 սեղմումը 1,5մլ, մեկ հիգենիկ մշակումը 3մլ է, 30վրկ., մեկ վիրաբուժական մշակումը 6մլ է- 90վրկ. : Մշակումից հետո ձեռքերի լվացում չի պահանջում: 1լ նախատեսված է 333 հիգենիկ կամ 167 վիրաբուժական մշակման համար: Ունի որակի և ISO հավաստագրեր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ: Ախտահանիչ միջոցը նոր է, չօգտագործված: Մատակարարման պահին ապրանքի պիտանիության ժամկետի 1/2-ի առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար ներկայացվում է որակի հավաստագիր: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԱրմենՖարմ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/06 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 45 | | | | | |